Երեխաների իրավունքների խախտումները Արցախի Հանրապետության շրջափակման պայմաններում

Կատարողներ՝ **Վլադիմիր Մարտիրոսյան, Արա Սարգսյան, Քրիստինա Խաչատրյան, Անժելա Գաբրիելյան, Մանե Դանիելյան**

Ղեկավար՝ **Տաթև Զաքարյան**

Ստեփանակերտ 2023, Սեպտեմբեր

Բովանդակություն

Ներածություն 2
Երեխաների՝ կյանքի և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքները 4
Երեխաների կրթության իրավունք 7
Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը 11
Երեխայի հանգստի և ժամանցի իրավունքը 13
Երեխաների առողջության պահպանության իրավունք 15
Եզրակացություն 19
Գրականություն 20

Ներածություն

Երեխաները օժտված են համընդհանուր իրավունքներով և հատուկ իրավունքներով, որոնցով ճանաչվում են նրանց հատուկ կարիքները և կարգավիճակը: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան սահմանում է իրավունքներ, որոնք պետք է իրացվեն, որպեսզի երեխաները զարգացնեն իրենց ողջ ներուժը: Երեխան դիտվում է որպես անհատ և որպես ընտանիքի ու

համայնքի անդամ՝ օժտված իր տարիքին և զարգացման փուլին հարիր իրավունքներով ու պարտականություններով: Բոլոր երեխաների հիմնարար մարդկային արժանապատվությունը և նրանց բարեկեցությունն ու զարգացումը ապահովելը հրատապություն է: Կյանքի տարրական որակի իրավունք պետք է ունենան բոլոր երեխաները՝ առանց որևէ խտրականության:

2022 թվականի դեկտեմբերի 12-ին քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ կեղծ բնապահպանական նկատառումներով փակել են Գորիս-Ստեփանակերտ մայրուղին, որը, Եռակողմ հայտարարության համաձայն[1], անցնում է Լաչինի միջանցքով՝ կապելով Արցախը (Լեռնային Ղարաբաղ) Հայաստանի և արտաքին աշխարհի հետ: Բնապահպան ներկայացող անձինք բազմաթիվ ապացուցված փաստերով սերտորեն փոխկապակցված էին ադրբեջանական իշխանությունների հետ կամ էլ հանդիսանում ադրբեջանական հատուկ ծառայությունների գործող կամ նախկին աշխատակիցներ[2]:

2023 թվականի ապրիլի 23-ին Ադրբեջանը հայտարարել է Գորիս-Ստեփանակերտ ճանապարհին՝ Հակարի գետի կամրջի վրա ադրբեջանական ապօրինի հսկիչ անցագրային կետ տեղադրելու մասին: Ադրբեջանի կողմից անօրինական անցակետի տեղադրման հետևանքով կրկնակի շրջափակման մեջ են հայտնվել Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Եղցահող, Հին շեն, Մեծ շեն և Լիսագոր համայնքները:

Շարունակվող շրջափակումը, որի հետևանքով 9 ամսից ավելի է, ինչ խոչընդոտվում է Արցախի միակ կյանքի ճանապարհի գործունեությունը՝ թողելով Արցախի 120 000 բնակչությանը, ներառյալ 30 000 երեխաներին լիակատար մեկուսացման մեջ՝ հանգեցնելով մարդու, այդ թվում՝ երեխաների իրավունքների զանգվածային խախտումների, ինչպես նաև ենթարկելով գոյաբանական և անվտանգության սպառնալիքների:

Ամբողջական շրջափակմանը զուգահեռ Ադրբեջանը միտումնավոր խաթարում է Արցախի կենսական նշանակության ենթակառուցվածքների՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման և կապի ու հաղորդակցության բնականոն աշխատանքը՝ նպատակ ունենալով էլ ավելի սրել առանց այն էլ ծանր մարդասիրական ճգնաժամը և մարդկային տառապանքներ պատճառել Արցախի բնակչությանը: Ադրբեջանի կողմից շարունակվող շրջափակումը, կենսական ենթակառուցվածքների խափանումները, ինչպես նաև պարբերաբար և հետևողականորեն իրականացվող զինված հարձակումները նպատակ են հետապնդում ֆիզիկական և հոգեբանական ահաբեկմամբ, կյանքի համար անտանելի պայմանների ստեղծմամբ էթնիկ զտման ենթարկելու Արցախը և ոչնչացնելու Արցախի բնիկ հայկական բնակչությունը:

Սույն հետազոտությունը համապարփակ կերպով ներկայացնում է Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետևանքով երեխաների իրավունքների խախտումները, որոնք արձանագրվել են շրջափակման 9 ամսվա ընթացքում: Աշխատանքն իրականացվել է մինչև 2023թ. սեպտեմբերի 15-ը, այդ պատճառով ներկայացված չեն սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից սանձազերված պատերազմը և դրա հետևանքով առաջացած մարդու իրավունքների խախտումներն ու

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020, https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/:

[2] Տե՛ս Center for Law and Justice "Tatoyan" foundation and Human Rights Ombudsman of Artsakh, Joint report Children of Artsakh in Azerbaijani blockade: Inflicting sufferings by ethnic cleansing (evidence-based analysis), Yerevan-Stepanakert, february 2023, https://www.artsakhombuds.am/hy/document/997:

իրականություն դարձած էթնիկ կտումները: Աշխատանքում շրջափակումը, հումանիտար իրավիճակն ու այլ իրողություններ ներկայացված են ներկա ժամանակով, երբ իրականացվել է հետապոտությունը:

Երեխաների՝ կյանքի և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքները

Արցախի Հանրապետությունում (այսուհետ՝ ԱՀ կամ ԼՂՀ) երեխաները օժտված են մի շարք հիմնարար իրավունքներով և դրանց բնականոն իրացման համար նախատեսված երաշխիքներով: Այդ իրավունքների մեջ իր ուրույն տեղն ունեն կյանքի և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքները: Նախքան վերոհիշյալ իրավունքներին և իրենց իրավական կարգավորումներին ու երաշխիքներին անդրադառնալը, պարզաբանենք թե ովքեր են համարվում երեխաներ: Դրա համար պետք է հղում կատարենք երեխաների իրավունքների մասին ԼՂՀ օրենքին, որով սահմանվում է որ, երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք է բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ[3]:

Անդրադառնանք այն միջազգային իրավական ակտերին, որտեղ իրենց տեղն են գտել երեխաների կյանքի և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքների վերաբերյալ կարևոր և հիմնարար մի շարք դրույթներ:

Առաջին փաստաթուղթը ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիան է, որով մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի անկապտելի իրավունք և մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով ապահովում են երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը[4]:

Այնուհետև որոշակի դրույթներ կան նաև Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ կամ «պեկինյան կանոններ» կոչվող փաստաթղթում: Անչափահասների կյանքի իրավունքի վերաբերյալ նշվում է որ, անդամ պետությունները պետք է ձգտեն պայմաններ ստեղծել, որոնք հնարավորություն կտան դեռահասի համար բովանդակալից կյանք ապահովել, որը կյանքի այն փուլում, երբ տղան կամ աղջիկը առավել հակված են ոչ ճիշտ վարքագծի, բարերար ազդեցություն կունենա հանցագործությունների և իրավախախտումների հնարավորությունից առավել չափով զերծ անձի զարգացման և կրթություն ստանալու համար[5]: Իսկ բռնություններից պաշտպանված լինելու իրավունքը շոշափվում է հետևյալ կանոնում՝ իրավակարգը պաշտպանող մարմինների և անչափահաս իրավախախտի միջև շփումը, իրավակարգը ապահովելու համար, իրագործվում է այնպես, որպեսզի պատշաճ կերպով հաշվի առնելով գործի հանգամանքները, հարգվի անչափահասի իրավական վիճակը, աջակցվի անչափահասի բարեհաջողությանը և խուսափվի աղջկան կամ տղային վնաս պատճառելուց: Այս կանոնը վերաբերում է ոստիկանների և այլ պաշտոնական

[3] Տե՛ս «Երեխաների իրավունքների մասին» ԼՂՀ օրենքը, Ստեփանակերտ 2008թ. հոդված 1:
[4] Տե՛ս ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ. հոդված 6, http://parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf:
[5] Տե՛ս ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («պեկինյան կանոններ») Նյու Յորք 1985թ. ընդհանուր սկզբունքներ 1.2, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505:

անձանց ընթացակարգի և վարքագծի մի քանի հիմնական ասպեկտներին՝ անչափահասների քրեական գործերում իրավակարգը ապահովելու համար: «Խուսափել վնաս պատճառելուց» արտահայտությունը խիստ ճկուն ձևակերպում է և, ընդհանուրի կարծիքով, ընդգրկում է հնարավոր գործողությունների շատ կողմեր (օրինակ՝ բանավոր կոպիտ վարվելակերպ, ֆիզիկական բռնություն, շրջապատողների կշտամբանք)[6]:

Ոչ պակաս նշանակալի դեր ունեն ՄԱԿ-ի մեկ այլ կարևոր փաստաթղթում՝ Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում զետեղված դրույթները: Սահմանված է, որ ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է: Այդ իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից: Նախատեսված է նաև, որ մահապատիժ չի կայացվում տասնութ տարեկանից երիտասարդ անձանց կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ[7]: Սա ևս շատ կարևոր երաշխիք է երեխաների կյանքի իրավունքի բնականոն և անխաթար իրացման համար:

Ներպետական օրենսդրությամբ այդ իրավունքների վերաբերյալ կարևոր դրույթներ են նախատեսված նախ և առաջ ԱՀ Սահմանադրությամբ, որով յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից և ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի[8]: Հասկանալի է, որ յուրաքանչյուր ոք հասկացության տակ մտնում են նաև երեխաները:

Երեխաների կյանքի և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքների վերաբերյալ առավել կոնկրետ կարգավորումներ են ամրագրված երեխաների իրավունքների մասին ԼՂՀ օրենքով: Կյանքի իրավունքի վերաբերյալ սահմանված է, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք: Պետությունը և նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար[9]:

Իսկ բռնությունից պաշտպանված լինելու իրավունքի վերաբերյալ սահմանված է, որ յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին, կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Պետությունը և նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավելուց, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների, օրինական շահերի այլ ոտնահարումից[10]:

---

[6] Տե՛ս ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («պեկինյան կանոններ») Նյու Յորք 1985թ. ընդհանուր սկզբունքներ 13.3, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505:

[7] Տե՛ս Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Նյու Յորք 1966թ. հոդված 6, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500:

[8] Տե՛ս ԱՀ Սահմանադրություն, Ստեփանակերտ 2017թ., հոդված 24:

[9] Տե՛ս ԼՂՀ օրենքը երեխաների իրավունքների մասին, Ստեփանակերտ 2008թ. հոդված 5:

[10] Տե՛ս «Երեխաների իրավունքների մասին» ԼՂՀ օրենքը, Ստեփանակերտ 2008թ. հոդված 9:

Շրջափակումը իր բացասական ազդեցությունը թողեց նաև երեխաների մի շարք հիմնարար իրավունքների բնականոն և անխաթար իրացման վրա: Շուրջ 30,000 երեխայի բազմաթիվ իրավունքներ ավելի սուր կերպով են խախտվում շրջափակման և կենսական ենթակառուցվածքների խափանման հետևանքով՝ հաշվի առնելով նրանց լրացուցիչ խոցելիությունը[11]: Այդ իրավունքներից կյանքի և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքները ևս ենթարկվել են զգալի խախտումների: Կյանքի իրավունքի խախտումները կապված են նաև երեխաների հոգեկան և ֆիզիկական առողջության խախտումների հետ, որոնց խախտումները ևս մեծաքանակ են: Շրջափակման հետևանքով բազմազան ու վիտամիններով հարուստ սննդի խիստ սղությունը վտանգում է երեխաների ֆիզիկական և մտավոր կայուն զարգացման հեռանկարը: Բավարար սննդի բացակայության պայմաններում ԼՂՀ-ում վաղաժամ ծնունդների դեպքերի աճ է գրանցվել: Հանրապետությունում ցորենի և այլուրի պաշարների սղության պատճառով հացը սկսել է տրամադրվել կտրոններով, այն էլ սահմանափակ քանակությամբ, բայց միևնույն է հերթերը չեն պակասել և շատ դեպքերում հենց երեխաներն են ժամերով կանգնում հերթերում՝ մի կտոր հացի համար: Հերթերում նաև արձանագրվել է անչափահասի ուշագնացության դեպք, ինչը թերսնված լինելով հանդերձ հերթերում երկար կանգնելու հետևանք է: Սովի պատճառով նույնիսկ արդեն գրանցվել է մահվան դեպք, երբ քաղաքացին մահացել է քրոնիկ թերսնուցման, սպիտակուցաէներգետիկ անբավարարության հետևանքով, որը և սովամահության հասցնելու հետևանքն է: Առկա է նաև դեղորայքի լուրջ խնդիր, հեմոդիալիզ ստանալու համար հիվանդները պետք է Երևան գնան, իսկ Ադրբեջանի կողմից ապօրինի տեղադրված անցակետով նրանց տեղափոխումը չունի ոչ մի երաշխիք: Վառ օրինակ է ԼՂ բնակիչ Վագիֆ Խաչատրյանի առևանգումը, ով փորձել է տեղափոխվել ՀՀ բուժման նպատակով, բայց անցակետում ապօրինի կերպով առևանգվել է, ինչը մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում է:

Վառելիքի պաշարների բացակայությամբ պայմանավորված շտապօգնության անհասանելիության պատճառով ԼՂ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում գրանցվել է չծնված երեխայի մահվան դեպք: Մահվան դեպքեր են նաև արձանագրվել բժշկական միջամտության անհնարինության պատճառով:

Ադրբեջանական կողմի հանցավոր գործողություններից բխող անորոշություններն ու սպառնալիքները մեծապես ազդում են երեխաների հոգեկան առողջության ու վարքի վրա, որը դրսևորվում է մանկական նյարդաբանի ու հոգեբանի այցերի 47 տոկոս աճով, երեխաների 34 վարքաբանական խնդիրների վերաբերյալ ծնողներից և ուսուցիչներից ստացած գանգատներով:

Միայն այն փաստը, որ շրջափակման հետևանքով շուրջ 550 երեխա մնացել է իր ընտանիք (տուն) վերադառնալու հնարավորությունից զրկված, որից 60-ը՝ առանց ծնողական խնամքի, իսկ մնացածը՝ ծնողներից մեկի հետ, խոսում է նրա մասին[12], որ ծնողներից անջատված լինելու պատճառով երեխաները էլ ավելի խոցելի են դառնում իրենց կյանքի կամ բռնությունից պաշտպանված լինելու իրավունքը խախտելու համար, քանի որ հիմնականում հենց ծնողներն են առաջինը ձեռնամուխ լինում այդ իրավունքների պաշտպանմանը:

---

[11] Տե՛ս ԱՀ ՄԻՊ զեկույց Ադրբեջանիկողմից Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին, 12.06.2023թ. էջ 33, https://www.artsakhombuds.am/hy/document/1028:

[12] Տե՛ս ԱՀ ՄԻՊ զեկույց Ադրբեջանիկողմից Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին, 12.06.2023թ. էջ 33-34, https://www.artsakhombuds.am/hy/document/1028:

Ավելի քան 1,200 երեխա զրկված է մեկ (քիչ դեպքերում՝ երկու) ծնողին հանդիպելու հնարավորությունից՝ ծնողի՝ շրջափակումից այն կողմ գտնվելու պատճառով: Ընտանիքների վերամիավորման ջանքերի արդյունքում ծնողների ու երեխաների մի մասը վերադարձել է տուն, սակայն դեռ բաժանված ընտանիքների մեծամասնությունը մնում է նույն կարգավիճակում՝ հանգեցնելով հատկապես երեխաների շարունակական տառապանքների: Միայն շրջափակման 39-րդ օրվանից հետո հնարավոր եղավ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ռուս խաղաղապահների աջակցությամբ փուլ-փուլ ընտանիքներ վերադարձնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, սակայն դեռևս բազմաթիվ երեխաներ մնում են տնից հեռու՝ ծնողների կամ նրանցից մեկի հետ տուն վերադառնալու հույսով[13]:

Վերլուծելով իրավիճակը և տեսնելով, որ դեռևս դրական որևէ նշանակալի փոփոխություններ չեն նկատվում, հասկանալի է, որ երեխաների՝ կյանքի և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքների խախտումները կկրեն շարունակական բնույթ, ինչն էլ իր հերթին բավականին բացասական ազդեցություն կունենա մեր երկրի հետագա կայուն և անվտանգ զարգացման վրա:

Երեխաների կրթության իրավունք

Կրթությունը երեխայի հիմնական իրավունքներից մեկն է, որի ապահովումը և խթանումը հանդիսանում է կայուն և բարեկեցիկ ապագայի հիմնաքարը: ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի նախաբանում սահմանվում է, որ «երեխան պետք է լիովին պատրաստ լինի հասարակության մեջ անհատական կյանքով ապրելու և դաստիարակվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված իդեալների ոգով և մասնավորապես խաղաղության, արժանապատվության, հանդուրժողականության, ազատության, հավասարության և համերաշխության ոգով»[14]: Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, մի շարք օրենքներով նույնպես նախատեսված են երեխայի իրավունքները՝ ելնելով դրանց առանձնահատկություններից, և այդ իրավունքների շարքին է դասվում նաև երեխայի կրթության իրավունքը:

Անդրադառնալով միջազգային իրավական փաստաթղթերին՝ ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)28-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես.

1. մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն,
2. խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ՝ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն տրամադրելը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը,

[13] Տե՛ս ԱՀ ՄԻՊ զեկույց Ադրբեջանիկողմից Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին, 12.06.2023թ. էջ 34, https://www.artsakhombuds.am/hy/document/1028:
[14] Տե՛ս ՄԱԿ կոնվենցիա «Երեխաների իրավունքների մասին», 1989թ., նախաբան, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503:

3. բոլոր համապատասխան միջոցներով ապահովում են բարձրագույն կրթության մատչելիությունը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների,
4. ապահովում են կրթական և մասնագիտական տեղեկատվության և ուղեցույցների մատչելիությունը բոլոր երեխաների համար,
5. միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը[15]:

Բացի այդ՝ Կոնվենցիայով մասնակից պետությունները խթանում և խրախուսում են միջազգային համագործակցությունը կրթությանը վերաբերող հարցերով, մասնավորապես, ամբողջ աշխարհում տգիտության և անգրագիտության վերացմանը և գիտատեխնիկական գիտելիքների և ուսուցման ժամանակակից մեթոդների մատչելիության հեշտացմանը նպաստելու նպատակով: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձվում զարգացող երկրների կարիքներին:

Կոնվենցիայով սահմանված է թե ինչին պետք է ուղղված լինի երեխայի կրթությունը, այն է.

- երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,
- երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը,
- երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելը,
- շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

Հարկ է նշել, որ Կոնվենցիայի և կից երկու արձանագրությունների՝ անդամ պետությունների կողմից կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ մշտադիտարկման միջոցով: Բոլոր անդամ պետությունները պարտավոր են պարբերաբար ներկայացնել զեկույցներ Կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման մասին[16]:

Համաձայն Երեխայի իրավունքների կոմիտեի՝ «Կրթությունը, որի իրավունքը յուրաքանչյուր երեխա ունի, նախատեսված է երեխային կյանքի հմտություններ տրամադրելու, մարդու իրավունքների ողջ շրջանակից օգտվելու երեխայի կարողությունն ուժեղացնելու և մարդու իրավունքների համապատասխան արժեքներով ներծծված մշակույթը խթանելու համար: Կրթության նպատակը երեխային հզորացնելն է՝ զարգացնելով նրա հմտությունները, սովորելու

[15] Տե՛ս նույն տեղում, հոդված 28:
[16] Տե՛ս ՄԱԿ «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիային կից Լրացուցիչ արձանագրություններ, http://www.mlsa.am/?p=9920, http://www.mlsa.am/?p=9920:

և այլ կարողությունները, մարդկային արժանապատվությունը, ինքնագնահատականը և ինքնավստահությունը»[17]:

Երեխայի խնամքը և դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար: Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին: Նման երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում:

Հատուկ դաստիարակչական կամ բուժկանխարգելիչ հաստատություններում գտնվող երեխան ունի հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության և մասնագիտական պատրաստության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, հարազատների և այլ անձանց հետ տեսակցության և նամակագրության իրավունք:

Այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի խնամակալություն կամ հոգաբարձություն է սահմանվում՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ երեխաների կրթության իրավունքի վերաբերյալ իրավակարգավորումները բխում են միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով նախատեսված նորմերից և ուղղված են երեխայի լավագույն շահի ապահովմանն ու արդյունավետ պաշտպանությանը:

Արցախի շրջափակման և Ադրբեջանի կողմից նրա կենսական ենթակառուցվածքների խաթարման պատճառով երեխաների կրթության իրավունքները կոպտորեն խախտվել են: Ջեռուցման խնդիրը հիմնովին խախտել է Արցախի կրթական գործընթացի բնականոն գործունեությունը, քանի որ մեծ թվով ուսումնական հաստատություններ գազով են ջեռուցվում, այդ թվում՝ մանկապարտեզները, դպրոցները, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները: Այսպիսով, Արցախի երեխաների կրթության իրավունքը ակնհայտորեն խաթարվեց 2022 թվականի դեկտեմբերի 14-16-ը, երբ Ադրբեջանը շրջափակման ժամանակ առաջին անգամ դադարեցրեց Արցախ գազամատակարարումը:

Դեկտեմբերի 19-ից գազամատակարարումը վերականգնվել է Ադրբեջանի կողմից, սակայն 2023 թվականի հունվարի 18-ից կրկին խափանվել է: Շրջափակման ողջ ընթացքում Ադրբեջանը պարբերաբար խափանում էր գազի բնականոն մատակարարումը, ինչի արդյունքում դպրոցներն ու այլ ուսումնական հաստատությունները պարբերաբար դադարեցնում էին իրենց աշխատանքը: Կայուն և անխափան ջեռուցման բացակայության և դասասենյակներում անհրաժեշտ ջերմաստիճանն ապահովելու անհնարինության պատճառով՝

[17] Տե՛ս Committee on the Rights of the Child, General Comment No. 1 (2001): Article 29 (1) - "The aims of education", CRC, Geneva, 2001, para. 2, accessed 15 July 2013:

այն էլ ձմռան պայմաններում կրթության ոլորտի պատասխանատուները պարբերաբար հայտարարում էին ուսումնական հաստատությունների փակման մասին, ինչի հետևանքով փակվել է 117 դպրոց, 20 000 դպրոցական երեխա զրկվել է կրթության իրավունքից[18]:

Հարկ է նշել, որ Արցախի դպրոցների 65%-ը ջեռուցվում է միայն գազով: Կարևորն այն է, որ արցախցիների ընդհանուր թվի 60%-ը կրթություն է ստանում գազով տաքացվող դպրոցներում: Բացի ջեռուցման խնդրից, շրջափակումը խոչընդոտել է մատակարարման գործընթացը: Մննդի կազմակերպում և առաքում ուսումնական հաստատություններ, որտեղ հաճախում են երեխաների (2-6 տարեկան) առավել խոցելի խմբերը, ինչպիսիք են մանկապարտեզները, նախադպրոցական հաստատությունները, տարրական դպրոցների խմբերը և երկարացված ժամերով աշխատող դպրոցները այլևս չի իրականացվում: Այսպես, 117 դպրոց, 41 մանկապարտեզ, 56 նախակրթարան և 20 շուրջօրյա կրթական հաստատություն ստիպված են փակվել՝ կապված ջեռուցման խնդրի և շրջափակումից բխող պարենային ճգնաժամի հետ: 2022 թվականի դեկտեմբերի վերջին օրերին 31 հասարակական, 7 բարեգործական և 3 մասնավոր մանկապարտեզների գործունեությունը դադարեցվել է:

30 հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերի աշխատանքն արդեն ամբողջությամբ կասեցվել է՝ թողելով շուրջ 7000 երեխայի՝ առանց կրթության իրենց իրավունքի հնարավորությունների: Թեև դասերի մի մասը կարող է անցկացվել հեռավար, սակայն Արցախում հանրակրթական գործընթացը խոչընդոտվում է Ադրբեջանի շարունակվող հանցավոր գործողությունների պատճառով: Մյուս ուսումնական հաստատությունների 90%-ը, ինչպիսիք են միջնակարգ մասնագիտական դպրոցները, արվեստի դպրոցները, բժշկական և երաժշտական քոլեջները և երիտասարդական ստեղծագործական կենտրոնները, նույնպես ջեռուցվում են գազով: Գազամատակարարման բացակայության պատճառով, սրանք նույնպես ստիպված էին ամբողջությամբ դադարեցնել իրենց գործունեությունը:

Վառելիքի և հիգիենայի պարագաների բացակայության պատճառով երեխաները զրկվում են նաև արտադասարանական խմբեր հաճախելու հնարավորությունից, ինչն ուղղակիորեն ազդում է երեխայի զարգացման վրա և կարող է բացասական ազդեցություն ունենալ հետագայում երեխայի վրա:

Գազամատակարարման ընդհատումներով պայմանավորված՝ շուրջ 4 շաբաթ շարունակ լրիվությամբ կամ մասնակիորեն չեն գործել ուսումնական հաստատությունները՝ հանգեցնելով երեխաների կրթության իրավունքի զանգվածային խախտման: Առանձնահատուկ դժվարություններ են ծագել բաժանված ընտանիքների ու հատկապես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության կազմակերպման հետ կապված, որոնց մի մասը նույնիսկ տևական ժամանակ հրաժարվել է դպրոց հաճախել ընտանիքից հեռու պայմաններում[19]:

Ադրբեջանական հանցավոր գործողությունների հետևանքով առաջացած անորոշություններով ու սպառնալիքներով պայմանավորված՝ երեխաների մոտ համատարած կերպով նկատվում է կրթության հանդեպ ուշադրության ու ընկալունակության նվազում, որը երկարաժամկետ կտրվածքում բացասաբար է անդրադառնալու նրանց զարգացման վրա:

---

[18] Տե՛ս Պաշտոնական տեղեկատվություն՝ Արցախի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (19 Հունվար 2023):

[19] Տե՛ս ԱՀ ՄԻՊ զեկույց, Ադրբեջանի կողմից Արցախի(Լեռնային Ղարաբաղ) շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին, վեց ամիս, Ստեփանակերտ 2023, https://www.artsakhombuds.am/hy/ad_hoc_reports:

Բացի այդ՝ գրքերի, գրենական պիտույքների և այլնի պակաս հանրապետությունում ևս առկա է, ինչը ևս հանգեցնում է երեխաների պատշաճ կրթություն ստանալու իրավունքի խախտումների:

Շրջափակման ընթացքում Ադրբեջանը հանրագումարային 166 օր շարունակ լրիվությամբ կամ մասնակիորեն ընդհատել է Հայաստանից Արցախ գազամատակարարումը, իսկ էլեկտրամատակարարումը լրիվությամբ խափանված է արդեն 204 օր շարունակ: Դա հանգեցրել է ամենօրյա հովհարային ու լրացուցիչ վթարային անջատումների և բազմաթիվ հիմնարկների գործունեության փակման կամ կրճատման[20]: Վերոնշյալը հանգեցրել է նաև երեխաների կրթության իրավունքի խախտումների, երեխաները զրկվել են պատշաճ կրթություն ստանալու իրավունքից:

Շրջափակման պատճառով բազմաթիվ երեխաներ չեն կարողանում մասնակցել Արցախից դուրս իրականացվող մի շարք կրթական ծրագրերի, դասընթացների, օլիմպիադաների, մրցույթների և այլն: Դրանց վառ օրինակներից է 2022 թվականի առաջին կեսին դպրոցների միջև տարրական օղակների աշակերտական օլիմպիադաները, որոնց արդյունքներով լավագույն աշակերտները պետք է մեկնեին ՀՀ՝ մասնակցելու հանրապետական փուլին, որից հետո հաղթողները պետք է մասնակցեին Դիլիջանում կազմակերպվող ամառային ճամբարին, սակայն շրջափակման պատճառով այս ամենը չեղարկվեց:

Բացի այդ, դպրոցները և բոլոր այլ ուսումնական հաստատությունները թշնամու ուղիղ նշանառության տակ են գտնվում, որը բացի ֆիզիկական անվտանգության բացակայությունից նաև հոգեպես ազդում է երեխաների վրա և ճնշող մթնոլորտ ստեղծում, ինչը ևս հանգեցնում է կրթության իրավունքի խախտմանը::

Վերոնշյալ վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ երեխաների կրթության իրավունքը բազմիցս խախտվել է: Այդ խախտումների վերացման, ինչպես նաև կանխման համար անհրաժեշտ է աշխատանք տանել ինչպես պետության ներսում, այնպես էլ միջազգային հարթակներում: Միջազգային հարթակներում աշխատանքները հիմնականում միտված կլինեն այդ իրավունքի խախտումները կանխելուն, իսկ ներպետական ծրագրերի միջոցով հնարավոր է նախապես հաշվի առնել երեխաների կողմից պատշաճ կրթություն ստանալու բոլոր հանգամանքները, հաշվի առնելով շրջափակման փորձը՝ ինչ-որ չափով կանխատեսել այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ և դրանց համար նախապես լուծման ուղիներ փնտրել, որպեսզի դրանք չհանգեցնեն երեխաների կրթության իրավունքի համատարած խախտումների: Հատկապես երեխաների կրթության իրավունքի պատշաճ իրացմանը պետք է ամենայն լրջությամբ մոտենալ, քանի որ պետության ապագան կրթված, դաստիարակված, գիտելիքահեն երեխաներն են:

Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի նախաբանում նշվում է, որ «երեխան իր անհատականության և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան

[20] Տե՛ս ԱՀ Կառավարության տեղեկագիր, շրջափակման 233-րդ օր, https://mailchi.mp/53d36f7e545d/day233am?fbclid=IwAR0t4yCW0i-qSfw2ut6KPh7E6RtbPeyY5-C9TWcUy20jK-nAm1lWmifP-L8:

միջավայրում՝ երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում»[21]: Սակայն, կյանքի տարբեր իրավիճակներից ելնելով՝ երեխաներից շատերը զրկվում են ընտանեկան միջավայրից, և երեխայի ընտանիքում ապրելու իրավունքն իրացնելու համար երեխայի խնամքի և հոգածության մի շարք պարտավորություններ ստանձնում է պետությունը: Վերջինս կարող է դիմել «ընտանեկան միջավայրի» ապահովման տարբեր ձևերի: Երեխայի «ընտանեկան միջավայրի» ապահովման պարտավորությունները միևնույն ժամանակ պետք է ներառեն այդ միջավայրում երեխայի «երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտների» բաղադրիչները:

Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը սահմանվում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ ԵԻԿ) (հոդված 20) և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով (հոդված 23, մասեր 3 և 4), իսկ ընտանիքի սահմանում տրվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 16, մաս 3) և ընտանիքի աջակցության առնչվող դրույթներ են սահմանվում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդված 10): Այլընտրանքային խնամքի վերաբերյալ դրույթները սահմանվում են ԵԱԽՈՒ (2009):

Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ուսումնասիրության համար կարևոր է սահմանել «ընտանիք», «ընտանեկան միջավայր», «այլընտրանքային խնամք» և «հաստատություն» եզրույթները: Այս եզրույթները սահմանելը կարևոր է ոչ միայն իրավունքի բովանդակության ընկալման, այլ նաև պետության կողմից ստանձնած պարտավորությունների գնահատման համար:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագիրը սահմանում է ընտանիքը, որպես «հասարակության բնական և խմբային միավոր» և նշում է պետության պարտավորությունն ընտանիքներին աջակցելու՝ հատկապես ընտանիքի կազմավորման ժամանակ, քանի որ այն պատասխանատու է երեխայի խնամքի ու կրթության համար»[22]:

Միջազգային իրավունքն ընտանեկան միջավայրի սահմանման հիմքում ընդունում է «ընտանիք» եզրույթը՝ զատելով այն «ծնողներ» եզրույթից: ԵԻԿ-ի 5-րդ հոդվածը սահմանում է հարգանքը երեխայի ծնողների նկատմամբ՝ հավասարապես այլ խնամակալների հետ «երեխայի զարգացող ունակությունների համապատասխան ուղղորդելու կոնվենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս»[23]: Նմանատիպ սահմանում է տալիս նաև ԵԱԽՈՒ-ն՝ նշելով, որ ընտանիքը հանդիսանում է «հասարակության հիմնարար խումբ և երեխայի համար բնականոն զարգացման, բարեկեցության և պաշտպանության միջավայր»:

Այսպիսով, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը, միայն երեխայի ծնողների հետ ապրելու հանգամանքը չէ, այլ երեխայի այնպիսի խնամքի ու մանկության ապահովումն է, որը համապատասխանում է երեխայի լավագույն շահերին:

Երեխայի լավագույն շահերը սույն իրավունքի համատեքստում երեխայի անհատական կարիքների դիտարկումն է՝ երեխայի և իրավիճակի գնահատմամբ: Համաձայն ընդհանուր մեկնաբանության՝ երեխայի լավագույն շահերը սահմանվում են որպես եռաշերտ սկզբունք՝

---

[21] Տե՛ս ՄԱԿ կոնվենցիա «Երեխաների իրավունքների մասին», 20 նոյեմբերի 1989 թ., Նյու Յորք:

[22] Տե՛ս «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 16 դեկտեմբեր 1966թ., Նյու Յորք:

[23] Տե՛ս ՄԱԿ կոնվենցիա «Երեխաների իրավունքների մասին», 20 նոյեմբերի 1989 թ., Նյու Յորք:

ներառելով երեխայի բուն իրավունքը, իրավական մեկնաբանությունն ու դրանց առնչվող ընթացակարգերի օրինաչափությունը՝ զուգահեռ նշելով հետևյալ անհատական հատկանիշները. «... երեխայի տարիք, սեռ, հասունության աստիճան, փորձ, փոքրամասնության խմբի պատկանելիություն, հոգեբուժական, զգայական կամ մտավոր հաշմանդամության առկայություն, ինչպես նաև երեխային հարազատ սոցիալական և մշակութային միջավայրը, ծնողների առկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ ապրելու հանգամանքը, ծնողների/խնամակալների և երեխայի միջև հարաբերությունների որակը, միջավայրի անվտանգությունը, ընտանիքի այլընտրանքային մոդելների առկայության որակը, ազգականները կամ այլ խնամակալներ»:

Շրջափակման պայմաններում մեծապես խախտվում է երեխաների այս իրավունքը ևս: Շրջափակման հետևանքով շուրջ 550 երեխա մնացել է իր ընտանիք (տուն) վերադառնալու հնարավորությունից զրկված, որից 60-ը՝ առանց ծնողական խնամքի, իսկ մնացածը՝ ծնողներից մեկի հետ: Միայն շրջափակման 39-րդ օրվանից հետո հնարավոր եղավ Կարմիր խաչի և ռուս խաղաղապահների աջակցությամբ փուլ-փուլ ընտանիքներ վերադարձնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, սակայն դեռևս բազմաթիվ երեխաներ մնում են տնից հեռու՝ ծնողների կամ նրանցից մեկի հետ տուն վերադառնալու հույսով:

Ավելի քան 1,200 երեխա զրկված է մեկ (քիչ դեպքերում՝ երկու) ծնողին հանդիպելու հնարավորությունից՝ ծնողի՝ շրջափակումից այն կողմ գտնվելու պատճառով: Ընտանիքների վերամիավորման ջանքերի արդյունքում ծնողների ու երեխաների մի մասը վերադարձել է տուն, սակայն դեռ բաժանված ընտանիքների մեծամասնությունը մնում է նույն կարգավիճակում՝ հանգեցնելով հատկապես երեխաների շարունակական տառապանքների[24]:

Իրավիճակն էլ ավելի է բարդացել Ադրբեջանի կողմից ապրիլին ապօրինի անցակետի տեղադրման հետևանքով: Երեխաների վերամիավորումը իրենց ընտանիքների հետ դարձել է գրեթե անհնար, իսկ հնարավորության դեպքում էլ՝ չափազանց վտանգավոր:

Սույն թվականի հուլիսի 29-ին բուժման նպատակով ԿԽՄԿ-ի ուղեկցությամբ ՀՀ մեկնող Վագիֆ Խաչատրյանի, իսկ օգոստոսի 28-ին ՀՀ-ում ուսում ստանալու նպատակով ՌԴ խաղաղապահ զորամիավորման ուղեկցությամբ մեկնող Ալեն Սարգսյանի, Լևոն Գրիգորյանի և Վահե Հովսեփյանի առևանգումները անցակետից ապացուցում են, որ նույնիսկ միջազգային ազդեցություն ունեցող նման կառույցների միջոցով չափահաս անձանց տեղաշարժը անցակետով անվտանգության որևէ երաշխիք չունի: Վերոնշյալի համատեքստում հարկ ենք համարում նշել, որ անչափահաս երեխաների կողմից անցակետով անվտանգ տեղաշարժի մասին խոսք անգամ գնալ չի կարող:

Երեխայի հանգստի և ժամանցի իրավունքը

Հանգստի և ժամանցի իրավունքն ու դրա իրականացումը հանդիսանում են երեխայի մանկության որակի, անհրաժեշտ զարգացման, ինքնուրույնության զարգացման և այլ իրավունքների իրականացման հիմքերից մեկը: Այս իրավունքը հաճախ դիտարկվում է որպես

[24] Տե՛ս ԱՀ ՄԻՊ զեկույցը Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին, 12.06.2023թ:

«մոռացված իրավունք», քանի որ հաճախ երեխաներն առհասարակ, անկախ հանգամանքներից, քիչ ժամանակ են հատկացնում խաղերին: Սակայն խաղը որպես սոցիալական և անձնական զարգացման հիմք կարևոր է յուրաքանչյուր երեխայի համար: Երեխայի մասնակցությունը ժամանցի անցկացման տարբեր ձևերին, ստեղծագործական և մշակութային գործողություններին թույլ է տալիս նրա մոտ գրանցել ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական, մտավոր, հոգևոր և բարոյական զարգացում: «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիաի 31-րդ հոդվածը երկու կետերում անդրադառնում է ինչպես երեխայի հանգստի և ժամանցի իրավունքին, այնպես էլ երեխայի մշակութային կյանքին նրա բազմակողմանիորեն մասնակցությանը, ստեղծագործական գործունեության և այդ ամենից հավասար հնարավորություններով օգտվելու իրավունքին: Խաղը և ժամանցի այլ ձևերին մասնակցությունը կարևոր է երեխայի առողջության և բարեկեցության համար, ու երեխայի մոտ զարգացնում են ստեղծարարությունը, պատկերացումը, ինքնավստահությունը և ինքնաբավարարությունը[25]: Այս իրավունքի իրացումը սերտորեն կապված է «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայում ներկայացված երեխայի այլ իրավունքների լայն շրջանակի հետ, որոնք են ազատ արտահայտման (հոդված 13), մտքի, խղճի և կրոնի ազատության (հոդված 14), հավաքների ազատության (հոդված 15), անձնական կյանքի գաղտնիության (հոդված 16), տեղեկատվություն ստանալու և մեդիայի դերի վերաբերյալ իրավունքին (հոդված 17), հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին (հոդված 23), (հոդված 28), կրթության նպատակներին (հոդված 30), երեխայի տնտեսական (հոդված 32) և այլ շահագործումներից (հոդված 36) ազատ լինելու իրավունքին: Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 31-րդ հոդվածն ամբողջությամբ չի ներկայացնում խաղի և ժամանցի բովանդակությունը, սակայն հանգստի և ժամանցի իրավունքի բովանդակությունը պետք է ընկալվի համադրությամբ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիաի այլ հոդվածների հետ, ինչպիսիք են, առաջին հերթին, կրթության իրավունքը, պարզաբանելով և ներկայացնելով խաղի ու ժամանցի բովանդակությունը, տնտեսական և շահագործման այլ ձևերից զերծ լինելու, զինված հակամարտություններից պաշտպանված լինելու, բռնությունից զերծ լինելու իրավունքները և այլն: Բացի այդ խաղը վաղ մանկության շրջանի ամենաբնորոշիչ հատկանիշներից է, երբ երեխաները և՛ վայելում են իրենց ժամանցը, և՛ մարտահրավեր նետում իրենց կարողություններին՝ զարգացնելով իրենց ունակություններն այլ երեխաների հետ շփվելու և խաղալու համար՝ երեխայակենտրոն, անվտանգ, աջակցող, խթանող և ոչ-լարված միջավայրում:

Զինված հակամարտությունների գոտում, կամ հումանիտար ու բնական աղետների տուժած երեխաների դեպքում այս իրավունքի իրացումը մղվում է ամենավերջին պլան: Սակայն, հենց այս դեպքերում է, երբ հանգստի ու ժամանցի ճիշտ կազմակերպումը հանդիսանում են վերականգնման ևս մեկ միջոց և ինչ-որ կերպ փոխհատուցում տեղահանման, կորստի և տրավմայի զգացողությունը:

Արցախի շուրջ 30.000 երեխաներ զրկված են իրենց հանգստի և ժամանցի իրավունքն իրացնելու հնարավորությունից, ինչն էլ պայմանավորված է մի շարք գործոնների առկայությամբ: Նման գործոնների շարքում կարող ենք ներառել էլեկտրոէներգիայի խափանումները, երեխաների ժամանցը կազմակերպելու համար անհրաժեշտ պարագաների բացակայությունը, վառելիքի, ըստ այդմ էլ տրանսպորտային միջոցների բացակայությունը և այլն:

[25] Տե՛ս ՄԱԿ կոնվենցիա «Երեխաների իրավունքների մասին», 20 նոյեմբերի 1989 թ., Նյու Յորք:

Նախադպրոցական տարիքի երեխաների համար հանգստի և ժամանցի իրավունքի իրացման գործում բավականին մեծ դեր ունեն մանկապարտեզները: Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանը ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է մանկապարտեզը:

Մանկապարտեզի առօրյան, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխաներին շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ սիստեմատիկ գրաֆիկին, դառնալ ավելի ինքնուրույն: Այս ամենի հետ մեկտեղ մանկապարտեզը համապատասխան տարիքի երեխաների համար իրենց առօրյան և ժամանցը վայելելու բացառիկ միջոց է: Շրջափակման պայմաններում՝ մի շարք խոչընդոտներով պայմանավորված՝ ինչպիսիք են սննդի, էլեկտրաէներգիայի, համապատասխան ջեռուցման, վառելիքի, հիգիենայի պարագաների և կենսական նշանակություն ունեցող մի շարք այլ իրերի և համակարգերի բացակայությունը, մանկապարտեզների աշխատանքը դադարեցված է: Նույն պատճառներով չեն գործում նաև բազում մշակութային զարգացման կենտրոններ, խմբակներ, ժամանցային ու խաղային ծրագրեր չեն կազմակերպվում:

Երեխաների կողմից իրենց հանգստի և ժամանցի իրավունքի իրացման համար խոչընդոտ է հանդիսանում նաև շրջափակման հետևանքով առօրյայում նրանց վրա դրված մի շարք պարտականություններ: Օրինակ, մինիմալ սնունդ գնելու համար Արցախի բնակչությունը ստիպված է լինում օրվա մեծ մասը անց կացնել հերթերում: Եվ քանի որ ընտանիքներում ծնողները հիմնականում օրվա մեծ մասը անց են կացնում աշխատավայրերում, կամ զբաղված են լինում տան ներսում առօրյա կարևոր ու անհետաձգելի գործերով, հաճախ հաց կամ հնարավոր այլ սնունդ գնելու համար հերթերում երկար ժամեր կանգնում են երեխաները: Այդպիսով էլ երեխաները զրկվում են իրենց հանգստի և ժամանցի իրավունքը լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Երեխաների առողջության պահպանության իրավունք

Յուրաքանչյուր երեխա ունի առողջության իրավունք: Պետությունները պետք է տրամադրեն որակյալ առողջապահություն, մաքուր ջուր, սննդարար սնունդ, մաքուր միջավայր և ապահովեն բարեկեցության համար անհրաժեշտ այլ կենսապայմաններով:
Առողջության իրավունքը մարդու համընդհանուր իրավունք է՝ ճանաչված միջազգային իրավունքով: Մասնավորապես, 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում առողջությունը նշվում էր որպես կարևոր նախապայման՝ մարդու բավարար կենսամակարդակը ապահովելու համար: Առողջության իրավունքը ամրագրված է 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում՝ մասնավորապես, երեխայի առողջության իրավունքը երաշխավորված է 24-րդ հոդվածով:
Երեխայի առողջության իրավունքի իրացումը անփոխարինելի է: Նրանց աճը, զարգացումը, իրավունքների պաշտպանությունը, լավ ֆիզիկական և էմոցիոնալ առողջությունը երեխաների արժանապատվության և իրավունքների հիմքերն են:
Երեխաների իրավունքների խթանման և պաշտպանության հիմնական միջազգային իրավական ակտը ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» է, որը կարգավորում է երեխաների իրավունքներին առնչվող ոլորտը: Երեխաները, անկախ նրանից, թե որտեղ են

գտնվում՝ զարգացող երկրներում, թե հակամարտության գոտիներում, իրավունք ունեն օգտվելու իրավունքների պաշտպանության նույն ծավալից: «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ երեխայի առողջության իրավունքը վերաբերում է 18 տարեկանից ցածր ցանկացած մարդու:
ՄԱԿ-ի կոնվենցիայից և Լրացուցիչ Արձանագրություններից բացի, մարդու իրավունքների բոլոր մյուս հիմնական իրավական ակտերում առողջության հետ կապված դրույթները տարածվում են ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների վրա և, որպես այդպիսին, կազմում են երեխայի առողջության իրավունքի իրագործման լրացուցիչ աղբյուրներ:
Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ առողջապահության առավել կատարյալ ստանդարտներից և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման ծառայություններից օգտվելու իրավունքը: Մասնակից պետությունները ձգտում են ապահովել, որպեսզի ոչ մի երեխա չզրկվի առողջապահական համակարգի նման ծառայություններից օգտվելու իր իրավունքից:
Մասնակից պետությունները ձգտում են տվյալ իրավունքի լիարժեք իրականացմանը և, մասնավորապես, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում.

ա) նորածինների և մանկական մահացության մակարդակն իջեցնելու համար,

բ) բոլոր երեխաներին անհրաժեշտ բժշկական օգնության և բժշկական սպասարկման տրամադրումն ապահովելու համար՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով առաջնային առողջապահությանը,

գ) հիվանդությունների և թերսնման դեմ պայքարելու համար, այդ թվում առաջնային առողջապահության շրջանակներում, ի թիվս այլ բաների՝ մատչելի տեխնոլոգիաների և բավականաչափ սննդարար մթերքների և խմելու մաքուր ջրի տրամադրման միջոցով՝ ուշադրության առնելով շրջակա միջավայրի աղտոտման վտանգավորությունն ու ռիսկը,

դ) մայրերի համար նախածննդյան և հետծննդյան շրջանում պատշաճ բժշկական օգնություն ապահովելու համար,

ե) երաշխավորելու համար, որ հասարակության բոլոր տարրերը, մասնավորապես, ծնողներն ու երեխաները տեղեկացված են երեխաների առողջության և սնման, կրծքով կերակրելու առավելությունների, հիգիենայի և շրջակա միջավայրի սանիտարիայի և դժբախտ պատահարները կանխելու մասին հիմնական գիտելիքներին, ինչպես նաև ապահովված է կրթության մատչելիությունը և այդ գիտելիքները կիրառելիս տրամադրվող աջակցությունը,

զ) զարգացնելու կանխարգելիչ բժշկական սպասարկումը, ծնողների համար ուղեցույցները և ընտանիքի պլանավորման վերաբերյալ կրթությունն ու ծառայությունները:

Առողջության իրավունքը ներառում է սոցիալ-տնտեսական գործոններ և որոշիչ գործոններ, ինչպիսիք են սնուցում, բնակարանային պայմաններ, անվտանգ և առողջ շրջակա միջավայր, խմելու ջրի հասանելիություն, բավարար սանիտարական պայմաններ:
Կոնվենացիան ճանաչում է պարունակվող բոլոր իրավունքների փոխկախվածությունն ու անբաժանելիությունը: Հետևաբար, առողջության իրավունքի իրացումը անփոխարինելի է բոլորի համար, իսկ առողջության իրավունքին հասնելը կախված է շատ այլ իրավունքների իրացումից:
Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր արդյունավետ և անհրաժեշտ միջոցները երեխայի առողջության վրա բացասաբար ազդող ավանդական սովորությունների վերացման նպատակով, պարտավորվում են խթանել և խրախուսել միջազգային համագործակցությունը՝ նպատակ ունենալով աստիճանաբար հասնել սույն հոդվածում ճանաչված իրավունքների լիակատար իրականացմանը: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող երկրների կարիքներին:
Մասնակից պետությունները միջազգային համագործակցության ոգով նպաստում են խեղումներով երեխաների կանխարգելիչ առողջապահական, բժշկական, հոգեբանական և

ֆունկցիոնալ բուժման բնագավառներում համապատասխան տեղեկատվության փոխանակմանը, ներառյալ՝ վերականգնման, հանրակրթական և մասնագիտական պատրաստության մեթոդների մասին տեղեկատվության տարածումը և դրանց մատչելիությունը՝ այս բնագավառներում մասնակից պետություններին իրենց կարողություններն ու հմտությունները կատարելագործելու և փորձն ընդլայնելու հնարավորություն տալու նպատակով: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող երկրների պահանջմունքներին:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածն ամրագրում է, որ երեխան, որի ծնողները բնակվում են տարբեր պետություններում, իրավունք ունի կանոնավոր կերպով, բացառությամբ հատուկ հանգամանքների, անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանել երկու ծնողների հետ: Այդ նպատակով մասնակից պետությունների ստանձնած պարտավորության, մասնակից պետությունները հարգում են ցանկացած, այդ թվում նաև սեփական երկրից հեռանալու և սեփական երկիր վերադառնալու՝ երեխայի և նրա ծնողների իրավունքը: Ցանկացած երկրից հեռանալու իրավունքը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի (ordre public), բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար և համատեղելի են սույն Կոնվենցիայով ճանաչված այլ իրավունքների հետ[26] :

Մասնակից պետություններն ընդունում են, որ մտավոր կամ ֆիզիկական խեղումներով երեխան պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին, ճանաչում են խեղումներով երեխայի՝ հատուկ խնամքի իրավունքը, խրախուսում և, ռեսուրսների առկայության դեպքում, դրա իրավունքն ունեցող երեխային և նրա խնամքի համար պատասխանատու անձանց ցույց են տալիս օգնություն, եթե այդ առթիվ խնդրանք է ներկայացվել և եթե դա համապատասխանում է երեխայի վիճակին, ծնողների կամ նրա նկատմամբ խնամք տանող այլ անձանց դրությանը:

Ճանաչելով խեղումներով երեխայի հատուկ կարիքները՝ նախատեսված օգնությունը տրամադրվում է ըստ հնարավորին անվճար՝ հաշվի առնելով ծնողների կամ երեխային խնամող այլ անձանց ֆինանսական միջոցները, և նպատակ ունի խեղումներով երեխայի համար ապահովել կրթության, մասնագիտական պատրաստության, առողջապահական ծառայությունների, առողջության վերականգնման ծառայությունների, աշխատանքային գործունեության նախապատրաստվելու, հանգստի միջոցներից օգտվելու հնարավորության մատչելիությունը, որը կհանգեցնի երեխային առավել լիակատար սոցիալական կյանքում ընդգրկելուն և նրա անհատականության զարգացմանը, ներառյալ մշակութային և հոգևոր զարգացմանը:

Վերոնշյալ իրավունքների իրացումը և պաշտպանությունը անհնար է դառնում Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման պատճառով:

Արցախն ամիսներ ի վեր զրկված է որևէ տեսակի հումանիտար օգնությունից, այդ թվում՝ բժշկական միջոցներից, առաջին անհրաժեշտության պարագաներից և սննդից: Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակումը հանգեցրել է ԼՂ բնակչության հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների, ներառյալ՝ կյանքի, արժանապատվության, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման, ազատ տեղաշարժի, անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, կրթության, սննդի, բավարար կենսամակարդակի, սոցիալտնտեսական և մշակութային իրավունքների: Հումանիտար ճգնաժամը հատկապես անբարենպաստ ազդեցություն ունի խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների վրա, ինչպիսիք են

[26] Տե՛ս ՄԱԿ կոնվենցիա «Երեխայի իրավունքների մասին», 1989թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503:

երեխաները, տարեցները, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն: Մասնավորապես, շրջափակման մեջ են գտնվում 30000 երեխա, 9000 հաշմանդամություն ունեցող անձ, 20000 տարեց և 60000 կին:

Ադրբեջանի կողմից շարունակվող շրջափակումը, կենսական ենթակառուցվածքների խափանումները, ինչպես նաև պարբերաբար և հետևողականորեն իրականացվող զինված հարձակումներն ու ուժի կիրառման սպառնալիքները նպատակ են հետապնդում ֆիզիկական և հոգեբանական ահաբեկմամբ, կյանքի համար անտանելի պայմանների ստեղծմամբ էթնիկ զտման ենթարկելու Արցախը և ոչնչացնելու Արցախի բնիկ հայկական բնակչությանը:

Շուրջ 30,000 երեխայի բազմաթիվ իրավունքներ ավելի սուր կերպով են խախտվում շրջափակման հետևանքով՝ հաշվի առնելով նրանց լրացուցիչ խոցելիությունը[27]:

Երեխաների առողջական խնդիրները մաս են կազմում առողջության իրավունքի հատվածում նշված խնդիրների, ներառյալ՝ դեղորայքի ու հիգիենայի պարագաների սղություն, քրոնիկ հիվանդների պարբերական այցեր Հայաստան և այլ երկրներ, պլանային վիրահատությունների կասեցում և այլն:

Տարբեր ժամանակահատվածներում արձանագրվել է մանկական կաթնախառնուրդների բացակայություն, կամ խիստ սղություն, ինչը հանգեցրել է հարյուրավոր մանուկների սնման լուրջ խնդիրների: Բազմազան ու վիտամիններով հարուստ սննդի խիստ սղությունը վտանգում է երեխաների ֆիզիկական և մտավոր կայուն զարգացման հեռանկարը:

Ադրբեջանական կողմի հանցավոր գործողություններից բխող անորոշություններն ու սպառնալիքները մեծապես ազդում են երեխաների հոգեկան առողջության ու վարքի վրա, որը դրսևորվում է մանկական նյարդաբանի ու հոգեբանի այցերի 47 տոկոս աճով, երեխաների վարքաբանական խնդիրների վերաբերյալ ստացած գանգատներով:

Կան երեխաներ, որոնք ունեն հատուկ դեղորայքի կարիք, որն անհնար է գտնել Արցախում: Սննդի պաշարները գրեթե սպառված վիճակում են, ինչը հանգեցնում է երեխաների թերսնման: 2023թ. հունվար-հուլիս ամիսների ընթացքում բժիշկների հսկողության տակ գտնվող հղի կանանց շրջանում սակավարյունության մակարդակը հասել է մոտ 90%-ի: Դա պայմանավորված է ոչ լիարժեք սննդով և համապատասխան դեղամիջոցների սղությամբ, կամ բացակայությամբ: Հուլիս ամսին արձանագրվել է բժշկի ցուցումով վիժումների կտրուկ աճ՝ 4 անգամ: Ցավալի իրավիճակին նպաստում են սթրեսը, ոչ լիարժեք սնունդը և դեղորայքի սղությունը, կամ բացակայությունը:

Միևնույն ժամանակ բավարար սննդի բացակայության պայմաններում Լեռնային Ղարաբաղում վաղաժամ ծնունդների դեպքերի աճ է գրանցվել: Գրանցվել է նաև Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում չծնված երեխայի մահվան դեպք՝ վառելիքի բացակայությամբ պայմանավորված շտապ օգնության անհասանելիության պատճառով:

Շրջափակման հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամի պայմաններում մանկապարտեզներում, դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում արձանագրվել են երեխաների ուշագնացության դեպքեր, որոնք թերսնուցման հետևանք են, և իրավիճակը գնալով ավելի է վատթարանում, քանի որ սննդի պաշարները գրեթե ամբողջությամբ սպառվել են: Բացի այդ, երեխաների մի մասը օրվա մեծ մասը անցկացնում են հերթերում, որը ազդում է ոչ միայն նրանց առողջական վիճակի, այլև կրթության վրա:

Արցախի ողջ տարածքում արդեն 2 ամիս է ինչ ամբողջությամբ սպառվել են հիգիենայի պարագաները, ինչը ևս բացասական ազդեցություն է ունենում երեխաների առողջության վրա:

---

[27] Տե՛ս ԱՀ ՄԻՊ զեկույց, Ադրբեջանի կողմից Արցախի(Լեռնային Ղարաբաղ) շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին, վեց ամիս, Ստեփանակերտ 2023, https://www.artsakhombuds.am/hy/ad_hoc_reports:

Արցախի հանրապետական և «Արևիկ» մանկական բժշկական հիվանդանոցների վերակենդանացման և ինտենսիվ թերապիաների բաժանմունքներում կան մոտ 1 տասնյակ մանկահասակ երեխաներ, որոնց վիճակը գնահատվում է ծանր[28]:

Եզրակացություն

Ելնելով վերոնշյալ ուսումնասիրություններից ու վերլուծություններից՝ կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման պայմաններում խախտվել և շարունակում են խախտվել երեխաների հիմնարար բոլոր իրավունքները: Երեխաները բնակչության խոցելի խումբ են համարվում, ուստի նրանց իրավունքների պաշտպանությունը, դրանց խախտումների կանխումը պետք է յուրաքանչյուր պետության համար առաջնահերթ նպատակներից մեկը հանդիսանա:

Պետությունները, միջազգային տարբեր ատյաններն ու մարդու և երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունները պետք է համախմբեն բոլոր ջանքերը՝ ոչ միայն կանխեն, այլև վերականգնեն և բացառեն հետագայում վերոնշյալ և այլ իրավունքների խախտումները:

Առաջարկում ենք Մարդու իրավունքների պաշտպանին կից ստեղծել Երեխաների իրավունքների պաշտպանության խորհուրդ՝ հասարակական հիմունքներով, որի մեջ ներառված կլինեն տարբեր մասնագետներ կրթության և այլ բնագավառներից(մանկավարժներ, հոգեբաններ, բժիշտկներ, իրավաբաններ և այլն): Խորհուրդը, բացի խաղաղ և հանգիստ պայմաններում գործելուց, նպատակ կունենա ուսումնասիրել և հետազոտել շրջափակման հետևանքով երեխաների իրավունքների խախտումները, դրանք կվերլուծի և կարճ ժամանակահատվածում կներկայացնի ստեղծված իրավիճակում վերոնշյալ և այլ խնդիրների լուծման ծրագիր: Ծրագրում կներառվեն հիմնականում պետության կողմից իրականացվող միջոցառումների ցանկ, որոնք թույլ կտան հասնել երեխաների իրավունքների խախտումների կանխմանը, վերականգնմանը և բացառմանը՝ շրջափակման պայմաններում: Այսինքն պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք նվազագույնի կհասցնեն երեխաների իրավունքների խախտումները: Օրինակ՝ ԿԽՄԿ-ի կամ ռուս խաղաղապահների միջնորդությամբ Արցախի Հանրապետություն ներկրեն այն ամենը, ինչը անհրաժեշտ է՝ բացառելու երեխաների իրավունքների խախտումները: Խորհուրդը նաև պետք է հնարավորություն ունենա մասնակցելու պետության կողմից իրականացվող այն ծրագրերին, որոնք կատարվում եմ միջազգային հարթակներում, սակայն հիմնական ուղղությունը պետք է լինի ներպետական ոլորտը:

[28] Արցախի «Արևիկ» բուժմիավորումում 5 երեխա գտնվում է նորածնային և վերակենդանացման բաժանմունքում

Գրականություն

Ներպետական օրենսդրություն

1. «Երեխայի իրավունքների մասին» ԱՀ օրենք, 2008թ.,
2. ԱՀ Ընտանեկան օրենսգիրք, 2012թ.,
3. ԱՀ Կառավարության տեղեկագիր, շրջափակման 233-րդ օր,
4. ԱՀ ՄԻՊ զեկույց Ադրբեջանիկողմից Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին, 12.06.2023թ.,
5. ԱՀ Սահմանադրություն, Ստեփանակերտ 2017թ.,
6. Պաշտոնական տեղեկատվություն՝ Արցախի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (19 Հունվար 2023):

Միջազգային իրավական ակտեր

1. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, 2007թ.,
2. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը,
3. ՄԱԿ կոնվենցիա «Երեխաների իրավունքների մասին», 1989թ., նախաբան,
4. ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ.,
5. ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («պեկինյան կանոններ») Նյու Յորք 1985թ.,
6. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 16 դեկտեմբեր 1966թ., Նյու Յորք,
7. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Նյու Յորք 1966թ.,
8. Center for Law and Justice “Tatoyan” foundation and Human Rights Ombudsman of Artsakh, Joint report Children of Artsakh in Azerbaijani blockade: Inflicting sufferings by ethnic cleansing (evidence-based analysis), Yerevan-Stepanakert, february 2023,
9. Committee on the Rights of the Child, General Comment No. 1 (2001): Article 29 (1) - "The aims of education", CRC, Geneva, 2001, para. 2, accessed 15 July 2013: